

Գրքի եւ ընթերցանության պատմության համառոտ ուղին

«Կյանքն ընթերցանության համար տրված սահմանափակ ժամանակ է»:

Հրաչյա Մարիբեկյան

Հայաստանի ազգային գրադարանում ընթերցանության պատմության վերաբերյալ դասախոսություն կարդաց գրականագետ, արձակագիր, Ազգային գրադարանի տնօրեն Հրաչյա Մարիբեկյանը: Նա անդրադարձավ գրքի անցած ճանապարհին, գրադարանների զարգացմանն ու փոփոխություններին, ընթերցանության եղանակներին և սովորություններին, ընթերցանության արդիական ձևերին, էլեկտրոնային գրքին և շոշափեց ընթերցանության պատմությանն առնչվող բազմաթիվ այլ հարցեր: Բանախոսը ներկայացրեց, թե տարբեր դարաշրջաններում ինչպիսին է եղել ընթերցողը, ինչպես է կարդացել, ընթերցանության հետ կապված ինչ սովորություններ է ունեցել: Թղթագալարներից, գալարագրքերից ժամանակակից տպագիր գրքին անցումը, օրինակ, մարդուն հնարավորություն է տվել մի ձեռքն ազատ թողնել՝ այսպիսով կարդալուն զուգընթաց նաև գրել, մտորել, վերլուծել, ինչը մեծ առաջընթաց էր ընթերցանության զարգացման համար:

Անդրադառնալով ներկայիս ընթերցանության ձևերին ու եղանակներին՝ Մարիբեկյանը նկարագրեց, թե ինչ փոխակերպումներ կարող ենք ակնկալել գրքի էլեկտրոնային դարաշրջանում, ինչ հեռանկարներ են բացվում էլեկտրոնային գրքի ընթերցողի համար. առաջին անգամ հնարավորություն է ընձեռվում միջամտելու ստեղծագործությանը, դառնալ գրքի համահեղինակ: Էլեկտրոնային գրքի ձևաչափը դարձրեց է նաև գիրք հրատարակելը. մարդն ըստ էության դառնում է իր գրքի և՛ ստեղծողը, և՛ հրատարակիչը: Դասախոսությունից հետո Հրաչյա Մարիբեկյանը պատասխանեց ներկաների հարցերին, բուռն քննարկում ծավալվեց տպագիր գրքի ապագայի, դրա նպատակահարմարության, էլեկտրոնային գրքի մրցակցայնության, գրքի ապագայի և այլ թեմաներով: